

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ՆՈՐ ԳԵՂԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2022-2023

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

## ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

# Ներածություն

Սույն փաստաթուղթը ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջներին համապատասխան իրականացված ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվություն է: Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է հաստատության գործունեության վերլուծություն, որի նպատակն է բարելավել կրթական ծառայությունների մատուցման որակը, ինչպես նաև նպաստել հաստատության գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հաստատության ներքին գնահատման գործընթացում ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները՝

• Վիճակագրական տվյալների վերլուծություն

• Փաստաթղթային վերլուծություն

• Դիտարկում և փաստագրում

• Հարցումների իրականացում և արդյունքների վերլուծություն

Ներքին գնահատումն իրականացված է հաստատության տնօրենի՝ 29 օգոստոսի 2023թ. N 32 –Ա հրամանով կազմավորված հանձնաժողովի կողմից, որի անդամներն են՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Զարուհի Բաբաջանյան/ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն
**Հանձնաժողովի քարտուղար՝** Ամալյա Քոչարյան- ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մեթոդիստ
**Անդամներ՝**
Անահիտ Իսախանյան- ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակ
Աստղիկ Սահակյան- ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակ
Գայանե Ոսկանյան - ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակ
Անուշ Ղազարյան- ծնող
Սվետա Քալաշյան –ծնող
Անգելինա Բարսամյան- ծնող
Գոհարիկ Կարապետյան- ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետարանի ներկայացուցիչ
Արմինե Օհանջանյան – ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետարանի ներկայացուցիչ

**Ներքին գնահատման սույն հաշվետվությունը** հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի **«Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 07 սեպտեմբերի 2023թ. N 36-Լ հրամանով** և բաղկացած է 15 մասից, այդ թվում՝

✓ Մաս 1-ը ներառում է ընդհանուր տեղեկություններ մանկապարտեզի մասին:

✓ Մաս 2-ում ներկայացված են տվյալներ մանկապարտեզի շենքի և տարածքի անվտանգ շահագործման վերաբերյալ

✓ Մաս 3-ում ներկայացվում են տվյալներ հաստատությունում սաների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ նորմերի պահպանման վերաբերյալ

✓ Մաս 4-ում ներկայացվում են սաների անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների եվ հմտությունների ձևավորման համար ուսուցողական ծրագրերը

✓ Մաս 5-ում ներկայացվում են սաների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրերն ու միջոցառումները

✓ Մաս 6-ում ներկայացվում են տվյալներ ուսումնական հաստատության մանկավարժական անձնակազմի և ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ

✓ Մաս 7-ում ներկայացված են տվյալներ ուսումնական հաստատության զարգացնող միջավայրի վերաբերյալ

✓ Մաս 8-ում ներկայացված են տվյալներ ուսումնական հաստատության մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինման վերաբերյալ

✓ Մաս 9-ում ներկայացված են տվյալներ հաստատության մանկավարժական ու վարչական անձնակազմի և ծնողների միջև համագործակցության վերաբերյալ

✓ Մաս 10-ում ներկայացված են տվյալներ հաստատության և համայնքի համագործակցության վերաբերյալ

✓ Մաս 11-ը, 12-ը, 13-ը և 14-ը վերաբերում են ներառականության խնդիրներին և ԿԶԱՊԿ ունեցող սաների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին

✓ Մաս 15-ում ներկայացված են տեղեկություններ հաստատությունում սեռերի հարաբերակցության և ազգային փոքրամասնությունների երեխաների վերաբերյալ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Կազմակերպության անվանումը՝**
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Նոր Հաճըն համայնքի «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

**Կազմակերպաիրավական տեսակը՝**
համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ ՀՈԱԿ

**Սեփականության ձևը՝**
Համայնքային

**Հասցե՝**
ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, Նոր Գեղի, Աղբյուրակի փ. 30

**Հեռ.՝** 093254432 **Էլ. փոստ՝** norgeghi1@gmail.com

**Պաշտոնական կայքէջ՝**
https://1partez.wordpress.com/, https://www.facebook.com/,

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Աղյուսակ 1

| Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից. | | Մասամբ | |
| բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար. | Այո | | |
| գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին. | Այո | | |
| դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից. | այո | | |
| ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ. | Այո | | |

Ուսումնական հաստատության տարածքը նորակառույց պարսպով և ցանկապատով մեկուսացված է ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական օբյեկտներից: 2022-2023 ուսումնական տարում ձեռնարկված քայլերի արդյունքում հաստատության ետնաբակից հեռացվել է էլեկտրական լարերի մեծ մասը:

**Բարեգործական ներդրումների (շուրջ 26 մլն ՀՀ դրամ) շնորհիվ 2023թ. փետրվար-հունիս ամիսներին հաստատությունում իրականացվել են բակի բարեկարգման աշխատանքներ: Արդյունքում՝ հաստատության տարածքը պարսպապատվել և ցանկապատվել է, ետնամասում բացվել է հակահրդեհային անվտանգության ապահովման և ազատ տեղաշարժի նոր մուտք, իրականացվել են տարածքի ասֆալտապատման, կանաչապատման աշխատանքներ, տեղադրվել են նոր խաղասարքեր, տաղավար, ավազարկղ:**

Հաստատության տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների դեմ: Հաստատությունը ունի 2023թ. հունվարի 9-ին կնքված դեռատիզացիայի պայմանագիր ԱՁ Անուշ Գևորգյանի հետ և ըստ պլան-ժամանակացույցի կատարվող զննման արդյունքում իրականացնում է միջոցառումներ կրծողների դեմ (պայմանագրի լուսապատճենը բերված է ստորև) Մնացյալ դեպքերում հաստատության դռնապանի, հավաքարարի կողմից իրականացվում է հսկողություն, որպեսզի հաստատության տարածք չթափանցեն շներ, կատուներ:

## ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ 1

Չար գյուղ «09» «նոյեմբեր» 2023 թ.

«« «Չար գյուղի N1 մանկապարտեզ» ՀՈԱԿ, տնօրեն Վարդանյան, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, Անուշ Գևորգյան ԱՁ, ի դեմս անհատ ձեռնարկատեր Ա. Գևորգյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն):

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման 5 աշխատանքային օրվա ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

## 3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված ՝ անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը)

Աղյուսակ 2

| Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է. | այո | | |
| բ. ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին. | | մասամբ | |
| գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր. | այո | | |
| դ. ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով. | | | ոչ |
| ե. շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն). | | | ոչ |
| զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով. | | մասամբ | |
| է. համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին. | այո | | |
| ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին. | | | |
| թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը. | այո | | |
| ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին. | | մասամբ | |
| ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր. | | | ոչ |

| | | | |
|---|---|---|---|
| ժը. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է. | | մասամբ | |
| ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները. | այո | | |
| ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով. | այո | | |
| ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով. | այո | | |
| ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին. | Այո | | |
| ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին. | | մասամբ | |

Հաստատությունում թե սաների, թե աշխատակազմի համար պահպանված են ուսումնադաստիարակչական գործընթացի և աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման ծառայություններ:
Հաստատության շենքը վերանորոգված է: Տանիքը վերանորոգվել է 2011թ. և գտնվում է բարվոք վիճակում, հաստատությունում տեղադրված են եվրոդռներ և պատուհաններ, հատակը սալիկապատ է կամ լամինատապատ, առաստաղը ընդհանուր առմամբ բարվոք վիճակում է: Հաստատությունն ապահոված է ջեռուցման, օդափոխության համակարգերով, ջրամատակարարման ներքին ցանցով, տաք ջրամատակարարման և կոյուղու համակարգով: **2023թ. փետրվար-մարտ ամիսներին հաստատությունում իրականացվել են ետնաբակի ջրատար խողովակների, կոյուղագծերի նորոգման աշխատանքներ:**
Հաստատությունն ունի ընթացիկ վերանորոգման կարիք:
Հաստատության շենքը կայուն է քամիների, սողանքների, երկրաշարժերի նկատմամբ, ապահոված է հակահրդեհային անվտանգության սարքին, նոր ձեռք բերված լրակազմով:
Ուսումնական հաստատության ներքին փաստաթղթերը և համապատասխան շինարարական նորմերը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ հաստատության չորս խմբասենյակները, որոնց մակերեսները 48.3մ$^2$, 48.8 մ$^2$, 48.3մ$^2$ և 48.05մ$^2$ են, որոշակիորեն տարբերվում են ընդունված շինարարական նորմերից (տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում ) Հաստատությունում առկա է ևս մեկ սրահ, որի մակերեսը 51,9 մ$^2$ է, և որը ժամանակավորապես ծառայում է որպես խմբասենյակ և ննջասենյակ միաժամանակ: Այդ տարածքում սաների թիվը 18-25 է: Բնակավայրում վերանորոգման մեջ գտնվող մանկապարտեզի վերաբացումից և խմբի տեղափոխումից հետո հետո այդ սրահը ծառայելու է որպես մարզասրահ:

Հաստատությունն ունի երաժշտական և մարմնամարզական պարապմունքների համար նախատեսված դահլիճ՝ 68,8մ$^2$ մակերեսով, հատակը՝ լամինատապատ, բուժկետ՝ 7,8մ$^2$ մակերեսով, հանդերձարաններ՝ 12-13մ$^2$մակերեսով: Հաստատությունը չունի վատառողջ սաների համար նախատեսված մեկուսարան: Հնարավորության դեպքում քայլեր կձեռնարկվեն մեկուսարան ստեղծելու ուղղությամբ:
Հաստատությունն ունի թվով ութ մուտքի դուռ, որոնցից 6-ը գտնվում է 1-ին, իսկ 2-ը՝ երկրորդ հարկում, բոլոր մուտքի **դռները բացվում են դեպի դուրս:** Նշված մուտքերից առավել գործածական են 4-ը:
Հաստատության շենքը հարմարեցված չէ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների անվտանգ տեղաշարժի համար, թեքահարթակներ առկա չեն:
Հաստատության հեռուստացույցը, համակարգիչները, ծանր իրերը հնարավորինս ամուր են տեղադրված, ամրացված, բաց դարակներում դեկորատիվ իրեր, ծաղկամաններ, ծանր պարագաներ չկան, միջանցքները սալիկապատ են, սակայն սայթաքուն չեն, միջանցքների հատակին գորգեր չկան: Ստորին հարկերի պատուհանները վանդակաճաղեր չունեն:
Ուսումնական հաստատության կահույքը՝ պահարանները, սեղանները, աթոռներն ու մահճակալները մաշվածության տարբեր աստիճանի են. առկա է ինչպես տարիներ ի վեր օգտագործվող, այնպես էլ համեմատաբար նոր և բոլորովին վերջերս՝ 2021թվականի սեպտեմբերին ձեռք բերված գույք:
2023թ. 2-րդ կիսամյակում հաստատությունը գերմանական բարեգործական ընկերությունից նվեր է ստացել **պրոյեկտոր,** որը հաջողությամբ օգտագործվում է ուսումնադաստիարակչական գործընթացում: Սննդի բլոկի համար ձեռք է բերվել ևս մեկ սառնարան` ապահովելու սննդամթերքի առավել անվտանգ պահպանում:

Խմբասենյակներում սեղանների և աթոռների թիվը համապատասխանում է սաների թվին: Ավագ 2 խմբերում տեղադրված են 2021թ. ձեռք բերված երկտեղանի թվով 30 սեղաններ, յուրաքանչյուր խմբում 15 երկտեղանի սեղան՝ դարակներով, անվտանգ եզրերով, որոնց բարձրությունը 57 սմ է: Մանկական աթոռները միանման են, հենակի բարձրությունը 30-31 սմ է: Հաստատության միջին խմբերից մեկում տեղադրված են 4 տեղանոց թվով 6 սեղաններ, որոնց բարձրությունը 48 սմ է: Այդ սեղաններից յուրաքանչյուրի հետ տեղադրված է 4 աթոռ: Մյուս 2 խմբերում տեղադրված են հնամաշ 2 տեղանոց թվով 30 սեղաններ, որոնց բարձրությունը 46 սմ է:
Սեղանների շարքերի միջև հեռավորությունը 50 սմ է: Սեղանները դրված են լուսավորվող պատի մոտ, լուսավորությունը ձախակողմյան է:
Հաստատությունում առկա են ինչպես մեկտեղանոց, այնպես էլ երկտեղանոց մահճակալներ՝ տարբեր մաշվածության: Բոլոր տիպի պահարանները տարբեր մաշվածության են, խաղալիքների պահարանները հիմնականում ունեն սաների հասակներին համապատասխան բարձրություն, խաղալիքները հասանելի են սաներին:
Սանհանգույցներում առկա են կախիչներ սրբիչների համար:
Ընդհանուր առմամբ՝ հաստատության գույքը ունի թարմացման, համալրման կարիք, ինչի նպատակով հաստատության տնօրինության կողմից ձեռնարկվում են համապատասխան քայլեր: Նախատեսվում է նոր գույք ձեռք բերելիս հետևել համապատասխան հրամանով սահմանված նորմերին:

Քանի որ որևէ հաստատություն ապահովագրված չէ տարերային աղետների, հրդեհների ռիսկից, ուստի աշխատակազմի և սաների անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով՝ հաստատության տարբեր հատվածներում փակցված են տարհանման պլան-սխեմաներ, առկա է հակահրդեհային անվտանգության լրակազմ: Հաստատության աշխատակազմը ծանոթ է տարհանման պլանին, կրակմարիչների տեղադրման վայրերին, հակահրդեհային վահանակի գտնվելու տեղին ու պարագաներին:
**2023-2024 ուսումնական տարում նախատեսվում է ակտիվ համագործակցել ՀՀ ՆԳՆ համապատասխան կառույցների հետ, կազմակերպել հանդիպում-քննարկումներ, գործնական**

**պարապմունքներ՝ հաստատությունում անվտանգային միջավայրի բարելավման և աշխատակիցների տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:**
Հաստատության տարհանման ուղիները ազատ են, զերծ ծանր, տարհանումը խոչընդոտող իրերից:

2023թ. մարտ ամսին ՀՀ ԿԳՄՍ նախարարի «17» մարտի 2023թվականի N 381-Ա/2 հրամանով հաստատությանը տրվել է գործունեության իրականացման **լիցենզիա՝ ՍԵՐԻԱ Ա N 0830, սաների 145 լիցենզիոն տեղերով**:

Աղյուսակ 3

| Խմբասենյակ | Խմբասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| 1 | 48.4 | 1.61 | -0.39 |
| 2 | 48.9 | 1.63 | -0.37 |
| 3 | 48 | 1.6 | 0.4 |
| 4 | 48.4 | 1.61 | -0.39 |
| 5 | 51.3 (ննջասենյակի հետ միասին) | 2.052 | +0.052 |

Հաստատությունում գործում է սաների 5 խումբ: Խմբասենյակներից 4-ը, որոնց մակերեսները և մեկ սանին բաժին ընկնող մակերեսը ներկայացված են աղյուսակում, իրենց չափերով որոշ չափով տարբերվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շինարարական նորմերից: Հաստատության 5-րդ խմբի համար միաժամանակ որպես խմբասենյակ և ննջասենյակ ծառայող տարածքի մակերեսը 51,9քմ է: Տարածքի առանձնահատկություններից ելնելով՝ այդ սրահում սաների թիվը 18-25 է: Բնակավայրի ՝ վերանորոգման մեջ գտնվող մանկապարտեզի վերագործարկումից հետո մեր հաստատության սաների թիվը, անշուշտ, կնվազի, ինչը թույլ կտա ապահովել նրանց համար վերոնշյալ հրամանով նշված շինարարական նորմերով սահմանված մակերեսները:

## 4. ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Աղյուսակ 4

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին. | այո | |
| բ. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է | այո | |

| | | |
|---|---|---|
| դրանց օգտագործման կանոններին. | | |
| գ. հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ. | | ոչ |
| դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան. | մասամբ | |
| ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով. | այո | |
| զ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | այո | |
| է. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | այո | |
| ը. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով. | այո | |
| թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ | այո | |
| ժ. ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն). | այո | |
| ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը. | | ոչ |
| ժբ. ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված | Այո | |

| | | |
|---|---|---|
| սանիտարահիգիենիկ նորմերին. | | |
| ժզ.ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ. | Այո | |
| ժդ. ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն. | այո | |

Աղյուսակ 5

<table>
<tr><td colspan="7">Հաստատությունում առկա է բուժկետ</td></tr>
<tr><td colspan="7">Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)</td></tr>
<tr><td colspan="4"><u>Այո</u></td><td colspan="3">Ոչ</td></tr>
<tr><td>Բուժկետի գտնվելու հարկը և տա րածքը (քմ)</td><td>Բուժաշխա-տողներ (թիվը և նրանց պաշտոն-ները)</td><td>Բուժկետում առկա գույքը</td><td colspan="2">Բուժկետը վերանորոգված է, թե ոչ.</td><td>Բուժկետի սանիտարական վիճակը</td><td>Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը</td></tr>
<tr><td>1-ին հարկ, 7.89 ք.մ</td><td>1 բուժքույր</td><td>2 գրասենյան, 1 մանկական սեղան, 3 մեծ, 1 փոքր աթոռ, 1 բազկաթոռ, դեղորայքի պահարան, առաջին բուժօգնության դեղարկղիկ, առողջապահական բնույթի պաստառներ</td><td>Այո</td><td></td><td>լավ</td><td>Առկա են առաջին բուժօգնության դեղարկղիկը, ՆՈՒՀ-երի համար պարտադիր համարվող դեղորայքը, դիմակ, բախիլ, ձեռնոց, ախտահանող միջոցներ, վիրակապման միջոցներ, սաների անտրոպոմետրիկ չափումների համար նախատեսված պարագաներ</td></tr>
</table>

Ուսումնական հաստատության անձնակազմը ծանոթ է հաստատության Քաղաքացիական պաշտպանության պլանին: 2023թ. ապրիլ ամսին հաստատությունում իրականացվել է ռազմական գործողությունների սպառնալիքի ժամանակ շենքի տարածքից անձնակազմի և ավագ խմբերի սաների տարհանում և տեղակայում ժամանակավոր պատսպարանում:

2023-2024 ուսումնական տարում նախատեսվում է ակտիվ համագործակցել համապատասխան մարմինների հետ և կազմակերպել, անցկացնել խորհրդատվություններ, գործնական պարապմունքներ հակահրդեհային անվտանգության, հակաօդային պաշտպանության ուղղություններով:

Ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-վահանակ, կրակմարիչներ) գտնվելու տեղերի վերաբերյալ: Սաները, ըստ տարիքային առանձնահատկությունների, ստանում են գիտելիքներ, թե ինչպես պետք է դրսևորեն իրենց արտակարգ իրավիճակներում:

Շենքի տարբեր հատվածներում փակցված են տարհանման պլան-սխեմաներ:

Հաստատությունն ապահովված է տեղային ջեռուցման անվտանգ համակարգով, որը շահագործվում է ջեռուցման ամիսներին, շուրջօրյա: Ջեռուցումն ապահովվում է հաստատության ողջ տարածքում, այդ թվում՝ բոլոր խմբասենյակներում, ննջասենյակներում, միջանցքներում, դահլիճում, խոհանոցում, բուժքրոջ աշխատասենյակում, մեթոդական կաբինետում, որոնցում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ: Ջերմաստիճանը հաստատության տարբեր հատվածներում համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

Հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող ջրով: 2023թ. մարտ ամսին բակի բարեկարգման աշխատանքների շրջանակներում իրականացվել են վնասված ջրատար խողովակների նորոգման և խցանված կոյուղագծերի մաքրման աշխատանքներ, տարածքից հեռացվել են էլեկտալարեր:

Հաստատության բոլոր խմբասենյակներին կից առկա են վերանորոգված սանհանգույցներ (թվով 5), որոնք օրվա ընթացքում մի քանի անգամ ախտահանվում, մաքրվում են դաստիարակի օգնականների կողմից: Սանհանգույցներում մշտապես առկա են հիգիենայի պարագաներ՝ հեղուկ օճառ, թուղթ, սաներին ոչ հասանելի վայրերում տեղադրված են ախտահանող նյութերով տարաներ, պատերին փակցված են հիգիենիկ միջոցառումների վերաբերյալ ուսուցողական մանկական պաստառներ:

Հաստատությունում առկա է սանիտարական նորմերին համապատասխան գործող խոհանոց, որտեղ իրականացվում է սաների համար սննդի պատրաստման գործընթացը: Խոհանոցի աշխատակիցները, ինչպես նաև հաստատության այն աշխատակիցները, ովքեր օրվա որոշ պահերի գտնվում են խոհանոցում, կրում են գլխարկներ, գոգնոցներ, ձեռնոցներ: 2022թ. հունիս ամսին խոհանոցում տեղադրվել է գազի ազդանշանային համակարգ, խոհանոցում և կից տարածքում առկա են օդափոխման համակարգ, կրակմարիչ: Սննդի պատրաստումը իրականացվում է օրական 3-4 անգամ՝ ըստ նախապես հաստատված ճաշացուցակի: Սննդամթերքի պահեստում ապահովվում են սննդամթերքի պահպանման նորմերը: Սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ պաստառներ:

2023թ. 2-րդ եռամսյակում հաստատությունը ձեռք է բերել ևս մեկ սառնարան՝ միրգ բանջարեղենի պահպանման համար:

Հաստատությունում առկա է բուժկետ, որտեղ գտնվում են դեղորայքի և առաջին բուժօգնության պարագաների ապակեպատ պահարանը, առաջին բուժօգնության դեղարկղիկը, սաների

անտրոպոմետրիկ  չափումների համար նախատեսված հասակաչափը: Բուժկետում բուժքրոջ կողմից ըստ անհրաժեշտության ցուցաբերվում է առաջին բուժօգնություն սաներին, ինչպես նաև աշխատակիցներին: Բուժքույրը վարում է աշխատակիցների պարտադիր բժշկական զննության, պատրաստի սննդամթերքի նմուշառման, սննդամթերքի խոտանորշման, տարածքների ախտահանումների, աշխատակիցների առողջական վիճակի վերաբերյալ և այլ գրանցամատյաներ, հետևում հաստատությունում սանիտարական և սննդի կազմակերպման նորմերի պահպանմանը:

2023թ. բուժքույրը ծնողների հետ անց է կացրել «Առաջին բուժօգնությունը շնչարգելության ժամանակ» թեմայով հանդիպում հաստատության դահլիճում: Հանդիպման ժամանակ խոսվել է նաև կարմրուկի, ջրծաղիկի մասին, ծնողների հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ:



5. ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Աղյուսակ 6

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ. | այո | |
| բ.ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ. | այո | |

Աղյուսակ 7

| **Ամսաթիվը** | **Խումբը** | **Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը** | **Մասնակիցներ ի թիվը** |
|---|---|---|---|
| 16.09.2022թ. | Ընդհանուր հանդիպում բոլոր խմբերի ծնողների հետ | Ծնողական ընդհանուր հանդիպում, որի ընթացքում ի թիվս ընթացիկ կարգապահական, կազմակերպչական հարցերի քննարկվել և ծնողներին ներկայացվել են նախադպրոցական կրթական չափորոշչով սահմանված հիմնական ոլորտները: Կիրառվել է մասնագիտական գրականություն, հատուկ այդ նպատակով մեր կողմից պատրաստված պաստառներ, որոնց նպատակը նախադպրոցական տարիքի առանձնահատկությունների վերաբերյալ ծնողների տեղեկացվածության մակարդակի բարձրացումն է և ճիշտ ծնողավարությունը: | Ավելի քան 50 |

| | | | |
|---|---|---|---|
| | | <br> | |
| 07.12.2022թ. | Հաստատության նախասրահում ծնողական կրթության տեղեկատվական թերթիկների բաշխում | «Էլեկտրոնային միջոցների վնասակարությունը երեխաների համար» թեմայով՝ մեր կողմից պատրաստված տեղեկատվական թերթիկների ներկայացում և բաշխում ծնողներին։<br><br> | Շուրջ 80 |
| 09.12.2022թ. | Ցուցահանդես-վաճառք ծնողների մասնակցությամ | Սաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք սաների և ծնողների մասնակցությամբ։ Գոյացած գումարով ձեռք են բերվել զարգացնող | Շուրջ 90 |

| | | | |
|---|---|---|---|
| | բ հաստատության նախասրահում | խաղ և Զ. Եգանյանի խոսքի զարգացման փաթեթը:<br><br><br> | |
| 17.04.2023թ. | Ծնողական կրթության տեղեկատվական թերթիկների բաշխում | «Առողջ սնունդ, առողջ սերունդ » թեմայով տեղեկատվական թերթիկների ներկայացում, բաշխում ծնողներին:<br><br><br><br> | Շուրջ 90 |
| 08.05.2023թ. | Ծնողական հանդիպում | «Առաջին բուժօգնությունը շնչարգելության ժամանակ» թեմայով ծնողների հանդիպում հաստատության բուժքրոջ հետ: Անդրադարձ է եղել նաև | Շուրջ 50 |

| | | | |
|---|---|---|---|
| | | ջրծաղիկին, կարմրուկին, ծնողների հարցերը ստացել են սպառիչ պատասխաններ:  | |
| Ողջ ուստարվա ընթացքում | Ծնողական հանդիպումներ առանձին խմբերի ծնողների հետ | Ողջ տարվա ընթացքում հրավիրվել են ծնողական հանդիպումներ առանձին խմբերի ծնողների հետ, քննարկվել են կազմակերպչական, կարգապահական, հիգիենիկ և այլ ընթացիկ հարցեր: | 20-30 |

## 6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

Աղյուսակ 8

| **Ցուցանիշը** | **2021-2022** | **2022-2023** | **2023-2024** | **Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)** |
|---|---|---|---|---|
| Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը | **10** (ներառյալ տնօրեն և մեթոդիստ) Սեպտեմբերի 1-ի դրությամբ | **11** (ներառյալ տնօրեն և մեթոդիստ) Սեպտեմբերի 1-ի դրությամբ | **9** (ներառյալ տնօրեն և մեթոդիստ) Սեպտեմբերի 1-ի դրությամբ | նվազում |
| Մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 1.25 (1-ին կիսամյակ) 1.12 (2-րդ կիսամյակ) | 1.12 – դաստ. 1 տնօրեն 1 մեթոդիստ | 1.12-դաստ. 1 տնօրեն 1 մեթոդիստ | կայուն |

| Պաշտոնը | Անունը, ազգանունը, հայրանունը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատ վածը | Տվյալ հաստատությու-նում աշխատելու ժամանակահատ վածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | Զարուհի Բաբաջանյան | 24.08.2021-ից մինչ օրս | 24.08.2021-ից մինչ օրս | |
| Մեթոդիստ՝ Տնօրենի ուսումնական գծով տեղակալ | Ամալյա Քոչարյան | 02.03.2021թ. մինչ օրս | 02.03.2021թ. մինչ օրս | |
| Հաշվապահ<br><br>Տնտեսվար | Քրիստինե Բաբախանյան<br>Կարինե Զմոյան | 01.06.2022թ. մինչ օրս<br><br>15.09.2020թ. մինչ օրս | 01.06.2022թ. մինչ օրս<br><br>15.09.2020թ. մինչ օրս | |

Մանկավարժական աշխատողների ընդհանուր թվի մեջ ներառված են նաև հաստատության տնօրենը և մեթոդիստը **(Աղյուսակ 8**)։ Ըստ այդմ՝ մանկավարժական աշխատողների թիվը 2021-2022 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ եղել է 10 (տասը), 2022-2023 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ դարձել է 11 (տասը)։

2023-2024 ուսումնական տարում մանկավարժների թիվը պակասել է՝ դառնալով 9(ինը), քանի որ նախորդ ուսումնական տարում ավագ Բ խմբում 0.56 -ական հաստիքային միավորով երկու դաստիարակ է աշխատել, 2022թ. սեպտեմբերից աշխատանքից ազատվել է հաստատության լոգոպեդը և հաստիքը հանվել է հաստատության հաստիքացուցակից։ 2023-2024 ուսումնական տարում ավագ Բ խմբի դաստիարակի՝ աշխատանքից ազատվելու հանգամանքով պայմանավորված՝ այդ խմբում 1.12 հաստիքային միավորով, մինչև հայտարարված մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված մասնագետի հետ աշխատանքային պայմանագիր կնքելը որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով աշխատում է 1 (մեկ) դաստիարակ։

Դաստիարակների ծանրաբեռնվածությունը 1.12 է, աշխատանքային ժամերը 08:30-17:00, ընդմիջում 30 րոպե սաների հետ միասին։ Հիմնական գործառույթներից զատ՝ դաստիարակները ներկայանում են նաև մանկավարժական թեմաների շուրջ **պրեզենտացիաներով**, հանդես գալիս **մանկավարժական երգչախմբում** և **թատերախմբում։**

Հաստատության մանկավարժական աշխատողների մրցունակության բարձրացման մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով 2022-2023 ուսումնական տարում ևս կազմակերպվել են ՆԴ կրթական չափորոշիչների հետևողական ուսումնասիրում-քննարկումներ, տնօրենի հանձնարարությամբ դաստիարակների կողմից մշակվել և ներկայացվել են պրեզենտացիաներ, հաստատություն են հրավիրվել ոլորտի լավագույն

մասնագետ-մանկավարժներ, Կոտայքի ՏՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ներկայացրել առաջավոր փորձը, ոլորտում տեղ գտած փոփոխությունները, հետևողականորեն անց են կացվել մեթոդժամեր, ներդրվել են նոր, ժամանակակից մոտեցումներ, անհամեմատ ավելացվել է ուսումնական խաղերի քանակը ուսումնադաստիարակչական գործընթացում, այդ թվում դաստիարակների կողմից պատրաստված:

**Մանկավարժական երգչախումբը** ներկայացել է կատարումներով, **մանկավարժական թատերախումբը՝ թատերական** երաժշտական, ստվերային տիկնիկային, ոտնաթաթերի ներկայացումներով:

Ստեղծվել է յուրատեսակ **Լաբորատորիա,** որտեղ սաները, ըստ օրվա թեմայի, իրականացնում են փորձեր և բացահայտում բնության ամենատարբեր երևույթները՝ գույներ, նյութերի փոխազդեցություններ, ծանր/թեթև և այլն:









## *Տվյալներ մանկավարժական խորհրդի կազմի վերաբերյալ*

| Անուն, ազգանուն, հայրանուն | Զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության մանկխորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Զարուհի Բաբաջանյան | տնօրեն | Բարձրագույն | 24.08.2021-մինչ օրս | |
| Ամալյա Քոչարյան | մեթոդիստ | Բարձրագույն | 02.03.2021թ. մինչ օրս | |
| Սոնիկ Բաղալյան | դաստիարակ | Միջին մասնագիտական | 25.08.2015թ. մինչ օրս | |
| Աննա Սամվելյան | դաստիարակ | Բարձրագույն | 28.08.2018թ. 28.08.2023թ. (ազատում աշխատանքից) | |
| Աստղիկ Սահակյան | դաստիարակ | Բարձրագույն | 25.08.2022թ. մինչ օրս | |
| Գայանե Ռսկանյան | դաստիարակ | Բարձրագույն | 25.08.2022թ. մինչ օրս | |
| Մարիամ Եղոյան | դաստիարակ | Բարձրագույն | 11.01.2022թ. մինչ օրս | |
| Անահիտ Խախանյան | դաստիարակ | Միջին մասնագիտական | 25.08.2022թ. մինչ օրս | |
| Մելինե Մկրտչյան | Երաժշտական ղեկավար | Միջին մասնագիտական | 25.08. 2015թ. մինչ օրս | |
| Լիլիթ Բաղալյան | Պարուսույց | Բարձրագույն | 04.12.2019թ. մինչև 13.07.2023թ. (հղիության և ծննդաբերության արձակուրդ) | |
| Անի Գեղամյան | Փոխարինող պարուսույց | Բարձրագույն | 01.09.2023թ. (աշխատանքի անցնելու օրվանից) | |
| Ա. Նալբանդյան | Ծնող | | 25.08.2022-ից մինչև 24.11.2022թ. | |
| Ա. Բարսամյան | Ծնող | | 24.11.2022թ. մինչ օրս | |

| | |
|---|---|
| Ցուցանիշ | |
| ա. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն գիտական կոչում. | 0 |
| բ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերջին 5 տարում վերապատրաստում անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում. | 2 (Երկու) 2022թ. դեկտեմբեր<br><br>2 (նախատեսվում է 2023թ. աշնանը) |
| գ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերապատրաստվել որպես վերապատրաստող (դասախոս) և վարում են վերապատրաստման դասընթացներ. | 0 |
| դ. որքան է մանկավարժական աշխատողների միջին տարիքը. | 37(2021-2022 ուսումնական տարվա տվյալներ)<br><br>**40.4** (2022-2023 ուսումնական տարվա սեպտեմբերի դրությամբ  տվյալներ)<br><br>**40.1** (2023-2024 ուսամնական տարվա սեպտեմբերի դրությամբ տվյալներ ) |
| ե. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն միջազգային ու տեղական պարբերականներում(ամսագրերում) հրապարակված հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ. | 0 (նման հոդվածներ ունի հաստատության տնօրենը) |
| զ. մանկավարժական աշխատողներից քանիսն են ուսումնական գործընթացում կիրառում  ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ /ՏՀՏ/. | 9 |
| ը. որքան է մանկավարժական աշխատողների բացակայությունների ընդհանուր թիվը. | 86 օր 2022-2023 ուստարվա ընթացքում |

# Տվյալներ հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. սահմանված ժամկետում ձևավորվել է սաների համակազմը՝ ըստ տարիքային խմբերի | Այո | |
| բ.ուսումնական հաստատությունում իրականաց-վում են մանկավարժական խորհրդի նիստեր և առկա է մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյան. | այո | |
| գ.ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին և տվյալ տարիքային խմբի ծրագրին (այդ թվում՝ կրթության պետական լիազոր մարմնի կողմից հաստատված հեղինակային և այլընտրանքային) համապատասխան. | Այո | |
| դ.ուսումնական հաստատությունում ձևավորվել է ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով խումբ և ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է վերջիններիս մայրենի լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ. | | ոչ |
| ե.մանկավարժական աշխատողները տիրապետում ուսուցման ժամանակակից (երեխայակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ և այլ) մեթոդներին և գործնականում կիրառում դրանք. | Այո | |

| | | |
|---|---|---|
| զ. մեթոդիստը ցույց է տվել խորհրդատվական օգնություն մեթոդական, ուսումնական և դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար, անցկացրել է բաց պարապմունքներ, սեմինարներ, սեմինար-պրատիկումներ. | Այո | |
| է. մեթոդիստը վերահսկել է նախադպրոցական կրթական ծրագրի կատարումը. | Այո | |
| ը.ուսումնական տարվա ընթաց-քում հաստատությունում անցկացվել են ցուցադրական բաց պարապմունքներ, իրականացվել նախագծեր.<br>(Եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը): | Այո<br><br>2022-2023 ուստարվա ընթացքում հաստատությունում անց են կացվել հետևյալ օրինակելի պարապմունքները՝ «Երթևեկության կանոններ» ծանոթացում շրջակա միջավայրին, միջին Բ խումբ,, «Ով ինչպես է քայլում» երաժշտություն, միջին Ա խումբ, «Ձմեռ» ապլիկացիա, Միջին Ա խումբ, «Զարմանահրաշ մաթեմատիկա» մաթեմատիկա, Ավագ Բ խումբ, «Երեխաների իրավունքները բնության մեջ» էկոլոգիա, Ավագ Ա խումբ, «Տարվա եղանակները» խոսքի զարգացում կրտսեր 2-րդ խումբ, «Հայկական և այլ ազգերի պարեր» պար, Ավագ Ա խումբ:<br><br>Ուստարվա ընթացքում ուսումնադաստիարակչական աշխատանքներն առավել ուսանելի, պատկերավոր, հազեցած, արդյունավետ դարձնելու նպատակով հաստատությունում կազմակերպվել և իրականացվել են հետևյալ փոքր նախագծերը՝<br><br>1. 2022-2023 ուսումնական տարում ևս հաստատությունում քնի ժամին սաները ունկնդրել են **օրորոցային երգեր**, մեղեդիներ, որոք նրանց ոչ միայն հաղորդակից են դարձրել ազգային և համամարդկային | |

| | | |
|---|---|---|
| | արժեքներին, այլև նպաստել գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ապահովել առավել հանգիստ քուն:<br><br>2.**Մանկավարժական աշխատողների երգչախումբը շարունակել է ներկայանալ իր կատարումներով:** Նպատակը՝ մի կողմից աշխատակիցների գիտելիքների խորացումն է, մյուս կողմից սա գեղեցիկ օրինակ է սաների համար, նաև հաճելի անակնկալ մանկապարտեզի հյուրերի համար:<br><br>**3.Մանկավարժական թատերական խմբակը** ողջ ուստարվա ընթացքում ներկայացել է տիկնիկային, ստվերային, ոտնաթաթերի, երաժշտական յուրատեսակ ներկայացումներով:<br><br>**4. Սեպտեմբերի ամսին հաստատության բակում յուրատեսակ «Կենդանաբանական այգի» էր բացվել:** Սաները հնարավորություն ունեին մոտից ծանոթանալ հաստատություն բերված մի շարք կենդանիների՝ շուն, կատու, սագ, հավ, կով, կրիա, ձկներ, ճագար:<br><br>**5.Հատուկ մանկավարժ Զեմֆիրա Եգանյանի այցը մանկապարտեզ**, առանձին հանդիպումները բոլոր խմբերի սաների հետ, մատիկախաղերով երգերի ուսուցում, որոնք ավելի ուշ կիրառվել են որպես ֆիզկուլտդադարներ, թեմաների յուրացման յուրատեսակ խաղային մեթոդ:<br><br>**6**. Դեկտեմբեր ամսին հաստատությունում տեղի է ունեցել **սաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք** ծնողների մասնակցությամբ, որից գոյացած գումարով ձեռք են բերվել խոսքի զարգացման փաթեթ ը զարգացնող խաղ: | |

| | | |
|---|---|---|
| | **7**. Հաստատության սաների՝ **զինվորական ծառայության մեջ գտնվող, ռազմական գործողությունների մասնակից ծնողների, եղբայրների հետ հանդիպում,** Շնորհակալագրերի հանձնում, հետաքրքիր ցերեկույթի անցկացում:<br><br>**8.**Հունվար ամսին հաստատությունում բացվեց **«Լաբորատորիա»** , որտեղ տարբեր խմբերի սաները անց են կացնում հետաքրքիր, ուսանելի փորձեր՝ բացահայտելով բնության երևույթները, նյութերի հատկությունները:<br><br>**9**. Փետրվար ամսին սաների կողմից հաստատություն են բերվել **պլաստիկ շշեր և հանձնվել վերամշակման:** Նախապես անց են կացվել բնապահպանական թեմաներով զրույցներ սաների հետ:<br><br>**10. Հանդիպում Կոտայքի ՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ,** որի ընթացքում ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից ներկայացվեցին ԿԶԱՊԿ ունեցող սաների կարիքի գնահատման ընթացակարգին վերաբերող օրենսդրական նոր կարգավորումները: Հանդիպմանը մասնակցեցին Նոր Հաճըն համայնքի ևս երեք ՆՈՒՀ-երի ներկայացուցիչներ:<br><br>**11. ZOOM հարթակում հանդիպում սննդաբան Վ. Պետրոսյանի հետ,** որի նպատակը աշխատակիցների՝ խոհարար, տնտեսվար, բուժքույր, տեղեկացվածության մակարդակի բարձրացումն ու սաների առողջ սննդի կազմակերպումն է:<br><br>**12**.Մարտ ամսին ավագ Բ խմբում անցկացվեց աննախադեպ **«Գուշակիր մեղեդին» խաղ-մրցույթը,** որի ընթացքում սաները առանց նախապես պատրաստվելու ցուցադրեցին իրենց ստացած երաժշտական գիտելիքները:<br><br>**13.«Արմինա» պարային համույթի <u>այցը</u>** մանկապարտեզ, պարային | |

| | | |
|---|---|---|
| | համարների ներկայացում որի նպատակը սաների գեղագիտական ճաշակի ձևավորումը, ինչպես նաև հետաքրքիր առօրյայի ապահովումն էր մանկապարտեզում:<br><br>**14. Մանկավարժական աշխատողների հանդիպում մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Հայրապետյանի հետ,** որի ընթացքում քննարկվել են ոլորտին վերաբերող հարցեր, անց է կացվել կոլաժաթերապիա: | |
| թ.ուսումնական տարվա ընթաց-քում հաստատությունից դուրս անցկացվել են պարապմունքներ.<br>(Եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը): | Այո.<br><br>**1. Հոկտեմբեր ամսին միջին խմբերը ծանոթացում շրջակա միջավայրին պարապմունքների շրջանակներում այցելեցին վարչական բնակավայրի տարածքում գտնվող խնձորի այգիներ,** մասնակցեցին բերքահավաքին, համտեսեցին համեղ խնձորներ:<br><br>**2.** Հոկտեմբեր ամսին ավագ Բ խումբը **ծանոթացում շրջակա միջավայրին պարապմունքի շրջանակներում այցելեց Նոր Հաճն քաղաքի եկեղեցի և կից այգի:** Սաները խաղացին աշնան տերևներով՝ ավելի ուշ տպավորությունները նկարների տեսքով հանձնեցին թղթին:<br><br>**3**. Մայիս ամսին միջին Ա խմբի սաները **նկարչության պարապմունքի շրջանակում այցելեցին Արզնի առողջարանի այգի** և տեղում անցկացրին նկարչության բացօթյա պարապմունք:<br><br>**4.** Մայիս ամսին միջին Բ խմբի սաները այցելեցին բնակավայրի ամառային ճամբարի այգի և տեղում **անցկացրին երաժշտության բացօթյա պարապմունք**, երգեցին, ներկայացրին թիթեռնիկների պարը, խաղացին: | |

| | | |
|---|---|---|
| ժ.ուսումնական տարվա ընթացքում անցկացվել են պարապմունքներ համայնքային ենթակայության այլ կրթական հաստատություններում՝ գրադարան, երաժշտական դպրոց. (Եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը): | Այո.<br><br>**1.Աշնանը Ավագ Բ խումբը գեղարվեստական գրականության պարապմունքի շրջանակներում այցելեց** Նոր Գեղիի N 1 դպրոցի գրադարան, որտեղ գրադարանավարը խոսեց գրքերի, ընթերցանության կարևորության, գրքերը մաքուր, անվնաս պահելու մասին: Սաները դիտեցին մուլտֆիլմ գրքերի և ընթերցանության կարևորության մասին:<br><br>**2.**Հունվար ամսին ավագ խմբերի սաները **նկարչության պարապմունքների շրջանակներում այցելեցին** վարչական բնակավայրի **Արվեստի դպրոց**, ներկա գտնվեցին կտավների ցուցահանդեսին, ապա թղթին հանձնեցին իրենց տպավորությունները:<br><br>**3. Ապրիլ ամսին հաստատության ավագ Ա խումբը** վարչական բնակավայրի եկեղեցու բակում մասնակցել է Զատկի տոնին, ներկայացել երաժշտական գեղեցիկ կատարմամբ:<br><br>4.**Մայիսի 18-ին հաստատության ավագ խմբերի սաները վարչական բնակավայրի** Մշակույթի կենտրոնի բակում ներկայացան Համբարձման տոնին նվիրված յուրահատուկ միջոցառմամբ՝ երգ, պար, բեմականացում: | |

2022-2023 ուսումնական տարում շարունակել ենք նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների ուսումնասիրությունը, ծանոթացել աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումների, կատարել փորձի փոխանակում այլ հաստատությունների աշխատակիցների հետ, դաստիարակների կողմից պատրաստվել, ներկայացվել են կարևոր մանկավարժական թեմաների շուրջ (Խաղային կենտրոնները մանկապարտեզում) պրեզենտացիաներ:

Դեկտեմբեր ամսին **դաստիարակներից երկուսը** մասնակցել են մանկավարժական աշխատողների **պարտադիր վերապատրաստման** գործընթացին: 2023-2024 ուսումնական տարվա աշնանը նախատեսված է ևս երկու դաստիարակի վերապատրաստում:

Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել ուսումնական խաղերի միջոցով սաներին գիտելիքի փոխանցմանը, ամրապնդմանը, պարապմունքների հագեցվածությանը դիդակտիկ պարագաներով: Մանկավարժներն իրենք պատրաստել են զարգացնող խաղեր և ներդրել ուսումնական գործընթացում:

Հաստատության մանկավարժական աշխատողների ջանքերով ուստարվա ընթացքում կազմակերպվել, ներկայացվել են թատերական, երաժշտական տարաբնույթ ներկայացումներ: Այս ուսումնական տարվա ընթացքում ևս հաստատության մեթոդական կաբինետը համալրվել է տարաբնույթ խաղալիքներով, մեթոդական նյութերով, զարգացնող խաղերով:

Լուսանկարներ ուսումնադաստիարակչական գործընթացից՝

















# 7.ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԸ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատությունն ունի գործող մեթոդկաբինետ, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: | Այո | |
| բ. ուսումնական հաստատությունն ունի<br>✓ մարզադահլիճ,<br>✓ միջոցառումների անցկացման դահլիճ<br>✓ այլ հատուկ ուսումնական խմբասենյակներ (սենյակներ), այդ թվում՝ լրացուցիչ կրթական ծրագրերի համար (նկարչական խմբակ և այլն), որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, և ուսումնադիդակտիկ նյութերով. | միջոցառումների անցկացման դահլիճ, որը ծառայում է նաև որպես մարզադահլիճ | |

Ուսումնական հաստատությունն ունի ուսումնական, զարգացնող նյութերով, գեղարվեստական և մեթոդական, մասնագիտական գրքերով, տարաբնույթ, այդ թվում՝ մեր կողմից պատրաստված խաղերով և խաղալիքներով, օրթոպեդիկ գորգերով, տեղեկատվական պաստառներով հագեցած մեթոդական կաբինետ: 2022-2023 ուսումնական տարում հաստատության մեթոդական կաբինետը հագեցվել է նոր գրքերով, զարգացնող խաղերով,

խաղալիքներով, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված տարաբնույթ պարագաներով:

## Մեթոդական կաբինետի գույքի ցուցակը և լուսանկարները ստորև՝

**Զարգացնող խաղեր-** Ասոցիացիաներ՝ Հանելուկների աշխարհում, Երկրաչափական պատկերներ, Տրամաբանիկ, Կենդանիներ, Մրգեր և բանջարեղեններ, Գտիր ստվերը 2 հատ, Տարվա եղանակներ, Բանջարեղեններ

**Ուսուցողական քարտեր-** Թվեր, վայրի կենդանիներ, ընտանի կենդանիներ, հայերեն տառեր, երկրաչափական պատկերներ, տրանսպորտային միջոցներ, գույներ, ծաղիկներ, միջատներ, մարմնի մասեր, հագուստ, փոխադրամիջոցներ, բնության երևույթներ, պտղատու ծառեր, կահույք, թռչուններ, սողուններ, երաժշտական գործիքներ, սանհանգույց, ճանապարհային երթևեկության կանոններ, մասնագիտություններ, խոհանոցային պարագաներ

**Հեքիաթների գրքեր-** Հ.Ք. Անդերսեն Հեքիաթներ, Շ. Պերո Հեքիաթներ, Գրիմմ Եղբայրներ Հեիքաթներ, Դ. Դեմիրճյան Պուպուլ Մուկիկը, Լ. Պաչալունգա «Բարի լույս Յոզա», «101 զարմանահրաշ գիտափորձեր»Հովհ. Թումանյան 6 հատոր, Երեք խոզուկները, Ուլիկը, Պույ-Պույ մկնիկը, Կարդում ենք տանը և մանկապարտեզում, Առակներ, Իմ մեծ գիրքը- փոքրիկ գիտունիկ, Երազիկ Գրիգորյան «Վատ կախարդ պառավ», Թերապևտիկ հեքիաթներ, Մեդիագրագիտությանն ուղղված հեքիաթներ՝ Թվային պոչ, Լինում է, չի լինում առցանց, Կըտ-կըտ Ճուտիկը:

**Մասնագիտական գրականություն-** Զ. Եգանյանի Խոսքի զարգացման փաթեթը, Լ. Սմբատյան Խաղ և խաղ-զվարճանքների կազմակերպումը մանկապարտեզում, Լ. Սմբատյան Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում -տարբեր տարիքային խմբերի, Լ. Սմբատյան- Խոսքի զարգացման պարապմունքներ, Ս. Չիբուխչյան- Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, կրթական համալիր ծրագրեր 3-4, 4-5, 5-6 տարիքային խմբերի համար, ուսումնական ձեռնարկներ՝ Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզում, Մաթեմատիկայի պարապմունքները մանկապարտեզում, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց , Նախաշավիղ, Մոնթեսսորի տանը ըստ տարիքային խմբերի, Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ 3 օրինակ,

**Մեր կողմից ստեղծված խաղեր-** Ավազե տուփ լույսով, մաթեմատիկական գիտելիքները զարգացնող, ամրապնդող խաղեր, Մատիկներ, Ձեռքեր, Թվեր և հաշիվ, Գունային դոմինո, Թաթիկ-տոտիկ, Երկրաչափական պատկերներ, մանր մոտորիկան զարգացնող խաղեր, Կողմնորոշում տարածության մեջ, Գտիր զույգը, գունաճանաչողությունը զարգացնող խաղեր՝ Գնդեր, Ութոտնուկ, Շնաձուկ, Փուչիկներ և այլն

**Տրանսպորտային միջոցներ-** Շտապօգնություն, ավտոբուս, բեռնատար մեքենա, մարդատար մեքենա, աղբատար մեքենա, ոստիկանի, հրշեջ և զինվորական մեքենաներ, նավակ, ուղղաթիռ , ինքնաթիռ, ամբարձիչ կռունկ, գնացք

**Փայտյա խաղալիքներ-** Երկրաչափական պատկերներ 2 հատ, Թվեր, Տառեր, Թվեր-գնացք, դոմինո 2 հատ, կշեռք, Մարիամիկ, Արամիկ, կենդանիների, բանջարեղենի, թռչունների փայտե տախտակներ 5 հատ, Հայաստանի քարտեզ, շախմատ

**Պլաստիկե խաղալիքներ-** նավակ ծովային կենդանիներով, ավազի դույլ իր պարագաներով, բանջարեղեն, մրգեր, կենդանիներ, զլոբուս, երաժշտական գործիքներ, կեգլիներ

Օրթոպեդիկ գորգեր

**Փափուկ գորգ**-հայերեն տառեր

**Լեգոներ-** պլաստիկից, փայտից, փափուկ

**Տիկնիկային անկյուն** – ստվարաթղթե կերպարներ ըստ հեքիաթների, թատերական ներկայացումների համար նախատեսված կերպարային հագուստներ

**Հայկական ավանդական տիկնիկներ** – թվով 7 հատ

**Ուսուցողական պաստառներ-** Թվեր, Տառեր Ատամների խնամք, ավանդական տիկնիկներ, Մ. Մոնթեսսորի, Կենդանաբանական այգի, Սանիհանգույց, Հյուրասենյակ, Բակ, Մանկապարտեզ





Հաստատության միջոցառումների անցկացման դահլիճը, որտեղ տեղի են ունենում ինչպես սաների մասնակցությամբ ցերեկույթներ, ծնողական հանդիպումներ, այնպես էլ մարզական միջոցառումներ, ևս ապահովված է ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ անհրաժեշտ պարագաներով՝

Դաշնամուր- 1
Պահարան- 1
Մանկական աթոռներ-25
Հեռուստացույց- 1
Ձայնարկիչ - 2
Փոքր գնդակներ-6
Մեծ գնդակներ -2
Ցատկոտելու այծիկներ-1
Օղակներ- 15
Ցատկապարաններ- 10
Բարձեր -30

## 8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏՆՕՐԻՆՈՒՄ

| Ցուցանիշ | | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|---|
| ա. սան - մանկավարժ հարաբերությունը. | Սան / Մանկավարժ | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **129/8** (ներառված են դաստիարակները, եր. ղեկավարը, պարուսույցը, լոգոպեդը) | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **129 /9** (ներառված են դաստիարակները, եր. ղեկավարը, պարուսույցը, լոգոպեդը) | Սեպտեմբերի 1- ի դրությամբ **124/7** (ներառված են դաստիարակները, եր. ղեկավարը, պարուսույցը, լոգոպեդը) |
| բ. սան - սպասարկող անձնակազմ հարաբերությունը | Սան / Սպաս. անձնակազմ. | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **129/10** | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **129/10** | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **124/10** |
| գ. սան - վարչական անձնակազմ հարաբերությունը. | Սան / Վարչ. անձնակազմ | **129/4** (տնօրեն, մեթոդիստ, հաշվապահ, տնտեսվար) | **129/4** (տնօրեն, մեթոդիստ, հաշվապահ, տնտեսվար) | **124/4** (տնօրեն, մեթոդիստ, հաշվապահ, տնտեսվար) |
| դ. խմբերի միջին խտությունը. | | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **25,8** | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **25.8** | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **24.8** |
| ե. մեկ սանի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը. | | 295172 ՀՀ դրամ (հունվարից դեկտեմբեր) | 321693 ՀՀ դրամ (հունվարից դեկտեմբեր) | 344137 ՀՀ դրամ (հունվարից դեկտեմբեր) |
| զ. մանկավարժի միջին աշխատավարձը. + | | 1-ին կիսամյակ 120312 ՀՀ դրամ<br>2-րդ կիսամյակում 111375 ՀՀ դրամ | Մոտավորապես 104500(դաստիարակներ եր. ղեկավար, պարուսույց) | Մոտավորապես 119430(դաստիարակներ եր. ղեկավար, պարուսույց) |
| է. վարչական աշխատողների միջին աշխատավարձը.+ | | 1-ին կիսամյակ 129250 ՀՀ դրամ<br>2-րդ կիսամյակում 115000 ՀՀ դրամ | 128583 ՀՀ դրամ<br>(հաշվարկված վարչական 4 աշխատակցի համար սեպտեմբերի 1-ից օգոստոսի 31-ը | 131000 ՀՀ դրամ<br>(հաշվարկված վարչական 4 աշխատակցի համար սեպտեմբերի 1-ից օգոստոսի 31-ը ընկած |

| | | | |
|---|---|---|---|
| | | ընկած ժամանակահատվածի համար) | ժամանակահատվածի համար) |
| ը. սպասարկող կազմի միջին աշխատավարձը.+ | 1-ին կիսամյակ 106666 ՀՀ դրամ<br><br>2-րդ կիսամյակում 103333 ՀՀ դրամ | 103700 ՀՀ դրամ (հաշվարկված սպասարկող անձնակազմի 10 աշխատակցի համար սեպտեմբերի 1-ից օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի համար) | 104300 ՀՀ դրամ<br><br>(հաշվարկված սպասարկող անձնակազմի 10 աշխատակցի համար սեպտեմբերի 1-ից օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի համար) |
| թ. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը. | 0 | 0 | 0 |
| ժ. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը. | - | - | - |
| ժա. սոցիալապես անապահով ընտանիքներից սաների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը.<br>*(Եթե այո, ապա նշել այդ ծրագրերը):* | ______ | Համայնքի ավագանու՝ 29 դեկտեմբերի 2021թվականի N 54-Ա և 27 հունվարի 2022թ. -ի N 11 –Ա որոշումներ՝ սաների վարձավճարի նկատմամբ զեղչերի սահմանում երեք ծրագրի դեպքում 50 % և մեկ ծրագրի դեպքում՝ զրոյական դրույքաչափ: | Համայնքի ավագանու՝ 29 դեկտեմբերի 2021թվականի N 54-Ա և 27 հունվարի 2022թ. -ի N 11 –Ա որոշումներ՝ սաների վարձավճարի նկատմամբ զեղչերի սահմանում երեք ծրագրի դեպքում 50 % և մեկ ծրագրի դեպքում՝ զրոյական դրույքաչափ: |
| ժբ. դրամաշնորհային և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ներդրումների տարեկան չափը. | 0 | 26 մլն դրամ | |
| ժգ. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | **31339141 ՀՀ դրամ** (2021թ. սեպտեմբերից 2022թ. օգոստոս | **30790532 ՀՀ դրամ**<br><br>(2022 սեպտեմբերից 2023թ. օգոստոս) | ----- |

| | | | |
|---|---|---|---|
| ժդ. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | 21069925 ՀՀ դրամ | 2497233 ՀՀ դրամ (2022թ. օգոստոսից 2023թ. օգոստոսը ներառյալ) | ------ |
| ժե. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | Սեպտեմբերից օգոստոս 578071 ՀՀ դրամ | 300000 ՀՀ դրամ | |

2023թ. հաստատությունը ձեռք է բերել **սառնարան և էլեկտրական վառարան**, ընդհանուր 300000 ՀՀ դրամ արժողությամբ, համայնքային բյուջեից հատկացվել է 240000 ՀՀ դրամ՝ որպես Ֆոքըս օն չիլդրեն նաու ինկ բարեգործական կազմակերպության կողմից մանկապարտեզին **նվեր խաղասարքերի գումարի 10 %** համավճար։

## Խմբերի թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Խմբերի թիվը | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Վաղ տարիքի I | | | | |
| Վաղ տարիքի II | | | | |
| Կրտսեր I | | | | |
| Կրտսեր II | 1 | 1 | 1 | - |
| Միջին | 2 | 2 | 2 | Կայուն |
| Ավագ | 2 | 2 | 2 | - |
| Տարատարիք | | | | |
| Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ | | | | |
| Ընդամենը՝ | 5 | 5 | 5 | |

2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիներին հաստատությունում գործել և գործում է սաների 5 (հինգ) խումբ։

### Ըստ խմբերի սաների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Սաների թիվը | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Վաղ տարիքի I | | | | |
| Վաղ տարիքի II | | | | |
| Կրտսեր I | | | | |
| Կրտսեր II | 23 | 26 | 25 | նվազում |
| Միջին | 47 | 47 | 49 | աճ |
| Ավագ | 59 | 56 | 50 | նվազում |
| Տարատարիք | | | | |
| Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ | 0 | 0 | | |
| Ընդամենը՝ | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **129** | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **129** | Սեպտեմբերի 1-ի դրությամբ **124** | նվազում |

### Ընդհանուր տվյալներ սաների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Ցուցանիշ | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ | 129 (սեպտեմբերի 1-ի դրությամբ) | 129 (սեպտեմբերի 1-ի դրությամբ) | 124 | -<br>աճ |
| Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա օգոստոսի 20-ի դրությամբ | 82 | 74 | - | աճ |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սաների թիվը | 107 | 43 | - | աճ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնական տարվա ընթացքում սաների բացակայությունների միջին թիվը | - | - | - | - |
| Ուսումնական տարվա ընթացքում ազատված սաների թիվը | 85 | 77 | | աճ |

2021-2022 ուստարվա սկզբին սաների թիվը կրկին աճել է՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմելով 129 սան: Օգոստոսի 20-ի դրությամբ հաստատության սաների թիվը եղել է 82՝ պայմանավորված ավագ խմբերի սաների՝ հաստատությունից ազատման հանգամանքով:
աճով:

## 9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

| Ցուցանիշ | | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 |
|---|---|---|---|---|
| ա. սաների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից գրավոր ներկայացված առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկությունների տոկոսը ներկայացվածի նկատմամբ. | Թիվը / Տոկոսը | | 3/100% | |
| բ. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ,էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և սաների տոկոսը. | Թիվը / Տոկոսը | | 16 միջոցառում | |
| գ.ծնողական խորհրդի կազմում ԿԶԱՊԿ ունեցող սաների ծնողների թիվը եւ տոկոսը | Թիվը / Տոկոսը | | 0 | |
| դ. ծնողական խորհրդի կողմից հաստատության գործունեության վերաբերյալ ներկայացված կարծիքը քննարկվում է աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու ժամանակ. | Այո / Ոչ | | | |
| ե. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները. | * | | | |
| զ. ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը. | 100% | | | |
| է. այն ծնողների տոկոսը, որոնք օգտվում են նախարարության, համայնքի, հաստատության և կրթական այլ կայքերից: | | | | |

2022-2023 ուսումնական տարում հաստատությունը շարունակել է համագործակցել ծնողական համայնքի հետ, կազմակերպել ծնողական կրթությանը և ծնողների տեղեկացվածության աստիճանի բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնք առավել մանրամասն ներկայացված են սույն հաշվետվության 5-րդ մասում: Ծնողներից շատերը ուստարվա ընթացքում ներգրավված են եղել տարաբնույթ նախագծերում, կատարել կազմակերպչական աշխատանքներ, աջակցել հաստատության գործունեության իրականացմանը:

Տարեսկզբին՝ 2022թ. սեպտեմբերի 16-ին կայացել է ընդհանուր ծնողական հանդիպում, որին մասնկացել է մոտ 60 ծնող, քննարկվել են ընթացիկ կազմակերպչական հարցեր (հանդիպման արձանագրության լուսապատճենը՝ ստորև), բաց քվերակությամբ ընտրվել են ծնողական խորհրդի անդամներ:

Ծնողական խորհուրդը իր անդրանիկ նիստը գումարել է 2022թ. սեպտեմբերի 19-ին: Նիստի արձանագրության լուսապատճենը՝ ստորև: Թե ծնողական խորհրդում ընդգրկված, թե մյուս ծնողների հետ ողջ ուստարվա ընթացքում կապը եղել է սերտ և համագործակցային:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆՈՐ ԳԵՂԻԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ

ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Աղբյուրակի 30, norgeghi1@gmail.com 093254432

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

(ծնողական ընդհանուր հանդիպումը կայացել է 2022թ. սեպտեմբերի 16-ին)

Ծնողական ընդհանուր հանդիպմանը մասնակցել է շուրջ 60 ծնող, մանկավարժական 8 աշխատակից, հաստատության բուժքույրը: Հանդիպումը վարել է հաստատության տնօրենը:

Օրակարգում

1. Հաստատության աշխատանքային գրաֆիկի, ռեժիմի, սաների ընդունելության և տուն ճանապարհելու հետ կապված հարցերի քննարկում, մանրամասների, կարգապահական հարցերի ներկայացում ծնողներին:
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված հիմնական 5 ոլորտների, այդ նպատակով պատրաստված պաստառի ներկայացում ծնողներին, պարզաբանումներ ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառների, կրթական ծրագրով նախատեսվող պարապմունքների մասին՝ ըստ տրիքային առանձնահատությունների:
3. Առանձին խմբերի սաների վարձավճարի նկատմամբ կիրառվող արտոնությունների ներկայացում ծնողներին, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի վերաբերյալ պարզաբանումներ:
4. Սաների ընդունելության կամ էլեկտրոնային հերթագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի վերաբերյալ պարզաբանումներ:
5. Ծնողական խորհուրդի անդամների ընտրություն բաց քվեարկությամբ, յուրաքանչյուր տարիքային խմբից 1 -2 ծնող:
6. Ընթացիկ, կարգապահական այլ հարցեր:
7. Բուժքրոջ կողմից հիմնական սանիտարական պահանջների ներկայացում ծնողներին, պարզաբանումներ:

Լսեցին

1. Հաստատության տնօրենին, ով ծնողներին հանգամանորեն ծանոթացրեց օրակարգի 1-6-րդ հարցերին՝ պատասխանելով նաև ծնողների հարցերին ասվածի շուրջ:
2. Հաստատության բուժքրոջը, ով խոսեց օրակարգի 7-րդ հարցի շուրջ՝ սպառիչ ներկայացնելով անհրաժեշտ պահանջները և պայմանները:



Որոշումներ

1.Ծնողական հանդիպման ընթացքում բաց քվեարկությամբ ընտրվեց ծնողական խորհուրդի 7 անդամ՝ յուրաքանչյուր տարիքային խմբից 1 կամ 2 ծնող:

2.Սեղմ ժամկետներում ծնողները պետք է ներկայացնեն թե արտոնությունների տրամադրման, թե էլեկտրոնային հերթագրման կամ տվյալների մուտքագրման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Ստորև՝ լուսանկարներ հանդիպումից

Մանկապարտեզի տնօրեն՝ Զ. Բաբաջանյան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Ծնողական խորհուրդի անդրանիկ նիստը գումարվել է 2022թ. սեպտեմբերի 19-ին: Նիստին մասնակցել են ընդհանուր և խմբերի առանձին ծնողական հանդիպումների ընթացքում բաց քվեարկությամբ ընտրված թվով 15 ծնողներ:

Օրակարգում՝

1. Հաստատության 2022-2023 ուսումնական տարվա ծնողական խորհրդի կազմի հաստատում:
2. Ծնողական խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:
3. Ծնողական խորհրդի Աշխատակարգի հաստատում:
4. Առաջարկություններ ծնողների կողմից

Լսեցին

1. Հաստատության տնօրենին, ով խոսեց ծնողական խորհրդի կազմի հաստատման, նախագահի և քարտուղարի ընտրության մասին:
2. Ներկայացրեց ծնողական խորհրդի Աշխատակարգը:
3. Ծնողներին, ովքեր ներկայացրին առաջարկներ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման ուղղությամբ՝ համաձայն N 2 Հավելվածի:

Որոշեցին

1.Հաստատել ծնողական խորհուրդը հետևյալ կազմով՝

- Անահիտ Թումանյան
- Սվետա Քալաշյան
- Նարա Հովհաննիսյան
- Գայանե Վանյան
- Աննա Բալասանյան
- Թեհմինե Մկոյան
- Կարինե Թեմուրյան
- Անուշ Ղազարյան
- Լիլիթ Ղազարյան
- Անգելինա Բարսամյան
- Մարինե Խուդոյան
- Վեներա Ստեփանյան
- Մարիամ Բրուտյան
- Հռիփսիմե Չիլինգարյան
- Աննա Հարությունյան



2.Ձայների մեծամասնությամբ՝ 10 ձայն, ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Անգելին Բարսամյանը, քարտուղար՝ Գայանե Վանյանը:

3.Հաստատել ծնողական խորհրդի Աշխատակարգը համաձայն N 1 Հավելվածի:

4. Քննարկել և հնարավորության դեպքում ընդունել ծնողների կողմից ներկայացված առաջարկները:

Հավելված 1

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի 2022-2023 ուսումնական տարվա

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը |
| --- | --- | --- |
| 1. | Մասնակցել տոնական միջոցառումների, ցերեկույթների, սպորտլանդիաների կազմակերպական աշխատանքներին: | Տարվա ընթացքում |
| 2. | Մասնակցել ծնողական հանդիպումներին, տեղեկատվական, կրթական բնույթի քննարկումներին: | Տարվա ընթացքում |
| 3. | Ծանոթանալ սննդի կազմակերպական աշխատանքներին: | Տարվա ընթացքում |
| 4. | Ժամանակ առ ժամանակ այցելել մանկապարտեզ, հետևել սննդի պատրաստման ընթացքին, սանիտարական վիճակին: | Տարվա ընթացքում |
| 5. | Ներկայացնել առաջարկություններ հաստատության գործունեության բարելավման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության ուղղությամբ: | Տարվա ընթացքում |
| 6. | Մասնակցել Կոտայքի ՏՄԱԿ-ի հետ իրականացվող հանդիպում –քննարկումներին: | Տարվա ընթացքում |

Հավելված 2

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի 2022-2023 ուսումնական տարվա

# ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Յուրաքանչյուր օր էլեկտրոնային որևէ հարթակում հրապարակել օրվա ճաշացուցակը:
2.Յուրաքանչյուր ամսվա վերջին ծնողներին տրամադրել գրավոր տեղեկատվություն վարձավճարների մասով:
3. Թույլատրել ծնողներին ըստ անհրաժեշտության նախաձեռնել ծնողական հանդիպումներ մանկապարտեզի տարածքում:

Առաջարկները հաստատության համապատասխան աշխատակիցների հետ քննարկելուց հետո ընդունվեցին, աշխատակիցներին տրվեցին հրահանգներ՝ ծնողական խորհուրդի կողմից արված առաջարկները կյանքի կոչելու նպատակով:

Մանկապարտեզի տնօրեն՝ Զ. Բաբաջանյան
Ծնողական խորհուրդի նախագահ՝ Ա. Բարսամյան
Ծնողական խորհուրդի քարտուղար՝ Գ. Վանյան

## 10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| Ցուցանիշ | |
|---|---|
| ա. ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները.<br>*(Նկարագրել համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևը, ներդրման չափը, ամսաթիվը).* | Հաստատությունը համայնքային ենթակայության է, հետևաբար հաստատության գործունեությանն առնչվող հարցերը, հատկապես ֆինանսական բնույթի,, կարգավորվում են համայնքի անմիջական մասնակցությամբ: Հաստատության պահպանման ծախսերից, սննդի, գրենական և տնտեսական պարագաների, խաղալիքների, դեղորայքի ձեռքբերման համար հատկացվող գումարներից զատ, համայնքը 2022-2023 ուսումնական տարում հատկացրել է գումար՝<br>1. **Սառնարանի և էլեկտրական վառարանի (300000 դրամ)** ձեռքբերման համար<br>2. Խաղասարքերի նվիրատվության (Փոքրս օն չիլդրեն նաու ինկ) **10 % -ի չափով՝ 240000 ՀՀ դրամ** |
| բ.համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ հաստատության աշխատակազմի տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը.<br>*(Նկարագրել հաստատության աշխատակազմի մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը (վերջին 3 տարում).* | Հաստատության աշխատակիցները բնակվում և աշխատում են Նոր Գեղի բնակավայրում և որպես համայնքի բնակիչներ, անշուշտ, տեղյակ են համայնքային հիմնախնդիրներին: Նրանք մասնակցում են համայնքային աշխատանքներին. մասնավորապես շաբաթօրյակներին (2023թ.ապրիլի 29), նաև համայնքային տոնական միջոցառումներին և հիշատակի արարողություններին (Սբ. Զատիկ, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր և այլն):<br> |

| | |
|---|---|
| |  |
| գ. ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված ու անցկացված միջոցառումները և դրանց թիվը, մասնակից սաների և ծնողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը.<br>*(Նկարագրել հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, մասնակից սաների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը. (վերջին 3 տարում).* | Վերջին տարիներին մշակութային կյանքը Նոր Գեղիում բավական ակտիվ է եղել, կազմակերպվել են տարաբնույթ համայնքային միջոցառումներ (օր. Զատիկ, Վարդավառ, Երեխաների պաշտպանության օր), որոնցից շատերին իրենց մասնակցությունն են ունեցել նաև «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սաները։<br><br>2023թ. ապրիլ ամսին հաստատության ավագ Ա խմբի սաները (սաների և ծնողների ընդհանուր թվի մոտավորապես 30 տոկոսը ) Սուրբ Զատկին նվիրված միջոցառման ընթացքում բնակավայրի եկեղեցու բակում հանդես եկան երաժշտական կատարումով և պարով:<br><br><br><br>2023թ. մայիսի 18-ին հաստատության ավագ Ա և ավագ Բ խմբերի սաները (սաների և ծնողների ընդհանուր թվի մոտավորապես 30 տոկոսը) Նոր Գեղիի Մշակույթի կենտրոնի բակում հանդես եկան Համբարձման տոնին նվիրված հեղինակային ելույթով՝ երգ, պար, բեմականացում: |

| | |
|---|---|
| |  |
| դ.ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակիցների թիվը՝ ըստ ծրագրերի. *(Նկարագրել կրթական ծրագրերը, որոնք իրականացնում են հաստատությունը և ՀԿ-ները համատեղ, ծրագրի տևողությունը, թիվը, մասնակից սաների և աշխատակիցների թիվ).* | Նման նախագծեր առայժմ չեն իրականացվել: |
| ե.ուսումնական հաստատությունը համագործակցում է իրեն սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ. | 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետները անց են կացրել հանդիպում «Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և համայնքի ևս 3 մանկապարտեզների մանկավարժների, բուժքույրերի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել է սաների գնահատման, ԱՈՒՋՊ մշակման, վկայագրման կարգը:  |
| զ.ուսումնական | Նման փորձառություն դեռևս չկա: |

| | |
|---|---|
| հաստատությունը համագործակցում է համայնքում գործող բժշկական հաստատության հետ՝ ԿԶԱՊԿ ունեցող երեխաների հայտնաբերելու եւ ն/դ կրթության մեջ ներգրավելու նապատով. | |
| Է.ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքի հանրակրթական դպրոցների հետ՝ իր սաների սահուն անցումը կրթական հաջորդ մակարդակ ապահովելու նպատակով. | 2022-2023 ուսումնական տարում՝ 2023թ. հունիսի 20-ին հաստատությունում կայացել է ավագ խմբերի սաներիծնողների հանդիպումը «Գիտելիքը զենք է» ՀԿ ներկայացուցիչների հետ, որի թեման **սահուն անցման կազմակերպումն էր մանկապարտեզից դպրոց:**   |

# 11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի, միջոցառման և գույքի առկայության մասին. |
|---|---|
| ա. ուսումնական հաստատությունում բոլոր սաների համար հասանելի եւ հավասարապես որակյալ կրթության կազմակերպման նպատակով հաստատության տարեկան պլանում սահմանված են գործողություններ.<br>*(Եթե այո, ապա կատարել հղում).* | Այո: Տե՛ս հաստատության տնօրենի 2022-2023 ուսումնական տարվա պլանը |
| բ. ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանում ներկայացված են ԿԶԱՊԿ ունեցող սաների կրթության կազմակերպման որակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ, այդ թվում՝ մանկավարժների, դաստիարակների օգնականների վերապատրաստումներ.<br>*(Եթե այո, ապա թվարկել համապատասխան միջոցառումները).* | Այո, Տե՛ս հաստատության տնօրենի 2022-2023 ուսումնական տարվա պլանը |
| գ.վերջին հինգ տարում մանկավարժական աշխատողները մասնակցել են վերապատրաստումների, այդ թվում՝ «Համընդհանուր ներառական կրթություն» թեմայով.<br>*(Եթե այո, ապա նշել վերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստման ամսաթիվը և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել դրա արդյունավետությունը).* | Այո՛, վերապատրաստումը տեղի է ունեցել մանկապարտեզում, իրականացվել է Կոտայքի ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից 2023թ. փետրվարի 1-ին: Հանդիպման ընթաքում ներկայացվել են սաների կարիքի գնահատման, ԱՈՒԶՊ կազմման, ՏՄԱԿ ծառայություններից օգտվելու օրենսդրական կարգավորումները:<br><br>Նախորդ՝ 2021-2022 ուստարում կազմակերպվել և անց է կացվել ներառական կրթության հիմնահարցերին վերաբերող երկու հանդիպում մանկապարտեզում ՏՄԱԿ-ի մասնագետների հետ: Հանդիպումներից մեկին ներկա են եղել նաև սաների ծնողները: |

| | |
|---|---|
| դ. վերջին հինգ տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած դաստիարակների օգնականների թիվը.<br>*(Եթե այո, ապա նշել վերապատրաստված դաստիարակի օգնականների թիվը).* | 0 |

## 12. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին |
|---|---|
| ա. ուսումնական հաստատությունում ամենուրեք (խմբասենյակներ, դահլիճներ, զուգարաններ և այլն)տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն.<br>*(Եթե այո, ապա նկարագրել ինչպիսի պայմաններ են ստեղծված տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիության ապահովման համար).* | ―――――― |
| բ. ուսումնական հաստատությունն ունի ԿԶԱՊԿ ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցմանկավարժ, հոգեբան և այլն).<br>*(Եթե այո, ապա թվարկել հոգեբանամանկավարժական աջակցության հաստիքները, նշել ինչպես է կազմակերպվում նրանց աշխատանքը: Նկարագրել նաև ներառականության ուղղությամբ համապատասխան աշխատողների պարտականությունների շրջանակը, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ կարիք ունեցող սաների հետ վարվող աշխանքները, լրացուցիչ հաստիքների կարիքը և այլն: Հաշվարկել մանկավարժա-հոգեբանական աջակցության թիմի աշխատակիցների թվի հարաբերակցությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների թվին):* | ―――――― |
| գ. ԿԶԱՊԿ ունեցող սաներն ապահովված են ֆիզիկական և ճանաչողական զարգացման համար անհրաժեշտ խաղային նյութերով, պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով.<br>*(Եթե այո, ապա թվարկել, թե ինչ ուսումնամեթոդական նյութեր ունի հաստատությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների համար, դրանց քանակը, ձեռք բերման տարեթիվը, ֆիզիկական վիճակը, օգտագործման* | |

| | |
|---|---|
| *համախականությունն ու արդյունավետությունը և այլն: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը).* | |
| դ. ուսումնական հաստատության խմբասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԶԱՊԿ ունեցող սաները մեկուսացված չեն. *(Եթե այո, ապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար կրթության և խնամքի կազմակերպման պայմանները, խմբասենյակների դասավորվածությունը).* | ___________ |
| ե. ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների հետ իրականացվող անհատական եւ խմբային աշխատանքների համար. *(Եթե այո, ապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար նախատեսված ռեսուրս-սենյակի ֆիզիկական վիճակը, չափերը, հագեցվածությունը սարքավորումներով, սենյակի օգտագործման հաճախականությունը: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը).* | ___________ |

## 13. ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի առկայության մասին |
|---|---|
| ա. անհատական ուսուցման և զարգացման պլանները մշակվում են՝ համաձայն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական ծրագրերի՝ հաշվի առնելով սաների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը. *(Եթե այո, ապա մանրամասնել).* | _______ |
| բ.մանկավարժները գիտակցում են ներառականության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում են իրազեկման եւ կարծրատիպերի կոտրմանն ուղղված աշխատանքներ. *(Մանկավարժների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում).* | _______ |
| գ. մանկավարժներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և առանձնահատկություններից. *(Մանկավարժների վերաբերմունքը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում).* | Այո, մանկավարժները հավասարապես սեր, ջերմություն են տալիս և ապահովում խնամքի հավասար պայմաններ **բոլոր** սաների համար: Թեև այս ուսումնական տարում գրավոր հարցումներ չեն անցկացվել, սակայն ծնողական հանդիպումների ժամանակ անդրադարձ եղել է հարցին, և ծնողները դժգոհություններ չեն հայտնել: Հաստատության գործունեության հանդեպ առկա է **վստահություն:** |

| | |
|---|---|
| դ. մանկավարժները կարողանում են կարծրատիպերամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերել և ուսումնական նյութերում և հաղթահարել նույնիսկ սեփական վարքագծում. (Ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը հայտաբերելու և հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում): | ——— |

## 14. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

| Ցուցանիշ | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության այն սաների թիվը և տոկոսը, որոնք ունեն ԿԶԱՊԿ. | 0 | - | |
| բ. ԿԶԱՊԿ ունեցող սաների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ օր/սան. | 0 | - | |
| գ. լրացուցիչ կրթական ծրագրերում ներառվող՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների թիվը և տոկոսը. | 0 | - | |

**2023-2024 ուսումնական տարում նախատեսվում է ավելացնել ՏՄԱԿ-ի հետ մասնագիտական հանդիպումների, խորհրդատվությունների թիվը, խորացնել համագործակցությունը և ձեռնարկել քայլեր ուստարվա սկզբին սաների՝ արդեն առաջին օրերին դիտման արդյունքում նկատելի խնդիրների ուսումնասիրման ուղղությամբ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:**

## 15. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Ցուցանիշ | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| ա. սեռերի հարաբերակցությունը | 63 տղա<br>66 աղջիկ<br>(Սեպտեմբերի 1-ի դրությամբ) | 65 տղա<br>64 աղջիկ<br>(Սեպտեմբերի 1-ի դրությամբ) | 64 աղջիկ<br>60 տղա<br>(Սեպտեմբերի 1-ի դրությամբ) |
| բ. ուսումնական հաստատությունում ընդգրկված ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը. | 9 | 12 | 13 |